**Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարողությունների հզորացում՝ Համատեղ ավիացիոն պահանջների և ԵՄ ավիացիոն անվտանգության կանոնակարգերի ներդրման և կիրարկման նպատակով**

## Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| *Ոլորտ՝* | տրանսպորտ |
| *Տևողություն՝* | 24 ամիս |
| *Իրականացման ժամանակահատված՝* | փետրվար 2011 – *հունվար* 2013 |
| *Բյուջե՝* | 1.1մլն եվրո |

*Շահառու մարմին՝* Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն

*ԵՄ անդամ պետության գործընկեր՝* Առաջատար գործընկեր՝ Իսպանիայի ավիացիոն անվտանգության գործակալություն (AESA)

## Ծրագրի նկարագիր

***Նպատակ*** Հզորացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարողությունները Համատեղ ավիացիոն կանոնակարգերի (JARs) ներդրման ու իրականացման կամ Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության կանոններով փոխարինելու նպատակով:

***Բաղադրիչներ*** **Բաղադրիչ I.** Ներկա իրավիճակի գնահատում ու վերլուծություն
**Բաղադրիչ II.** ԵՄ ավիացիոն անվտանգության կանոնակարգերի իրականացում ու գործնական վերապատրաստումներ
**Բաղադրիչ III.** Օդային տրանսպորտի ու ռազմավարական հարցերի վրա ազդող տնտեսական կանոնակարգերի վերլուծություն
**Բաղադրիչ IV.** Տեղեկատվական համակարգերի զարգացում

***Ձեռք բերված արդյունքներ.***

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են.

ա)Ավելի քան 30 Եվրոպական ստանդարտներ, համատեղ ավիացիոն կանոնակարգեր ու Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության կանոններ են ընդունվել ու ներկայումս իրականացվում են Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության անձնակազմի կողմից;

բ)Համատեղ ավիացիոն կանոնակարգերի ու Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության փոխարինող կանոնների իրականացման

համար թույլտվություններն ու պատասխանատվությունը ներքին մակարդակում բաշխվել է;

գ)Մշակվել են փաստաթղթերի տվյալների բազայի ներքին տեղեկատվական կառավարման ու պահպանման համակարգեր,

դ)Իրականացվել է Հայաստանում ավիացիայի տնտեսական կարգավորման ու ԵՄ հետ դրա համեմատական վերլուծության ընդհանուր գնահատում:

**Հավելյալ տեղեկատվություն**